



Ազդարարության Trumpet's Sound **փող**

55-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2024





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սրբություն Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Պողոսի աղոթքը Կողոսացիներին ուղղված

Նամակում Նեյլ Բուբման

Հովնանի պատգամը. Աստված կարեկից է (1) . . . Դոն Սթորմր

Ապաշխարություն. շրջվել՝ Աստծուն

հետևելու համար (1) Ջորջ Հաուբ

Թե ինչպես նա խաղաղություն գտավ Վեր.՝ Հովեփի Հովսեփյան

Կենտրոնանալ Լիբանանի վրա Դոկտ.՝ Դանիել Ջեյմս

Սրբություն

Սրբությունը մի բան է, որը սովորաբար չենք օգտագործում, բայց հաճախ հանդիպում ենք Աստվածաշնչում: Այն կապված է Աստծո հետ. *«Մեծարեցե՛ք մեր Տեր Աստծուն ու երկրպագեցե՛ք Նրա սուրբ լեռան վրա, քանի որ Տերը՝ մեր Աստվածը, սուրբ է»:*

Հռոմ. 3-րդ գլուխը խոսում է մեր՝ որպես Աստծո փառքից զրկված մեղավորների մասին: Մենք պետք է մաքրվենք: Հայրը փափագում է մաքրված տեսնել մեզ: Տեր Հիսուսը միակ ճանապարհն է: Միրելի՛ ընթերցող, արդյո՞ք մաքրվել ես Գառան արյունով: Դրանից ավելի մաքուր բան կա՞:

Սուրբ լինել նշանակում է գատված լինել, այսինքն՝ առանձնացված լինել Աստծո համար (Ա Կորնթ. 6:11): Մենք պետք է ամեն օր գանք Աստծո ներկայության մեջ, որպեսզի քննենք ինքներս մեզ ու մաքրվենք: Մտածե՛ք, թե օրվա ընթացքում քանի անգամ եք ձեռքերը լվանում:

Պետրոսը գրեց. *«Ինչպես Նա, ով ձեզ կանչեց, սուրբ է, այնպես էլ սուրբ եղեք ձեր բոլոր գործերում, որովհետև գրված է՝ սուրբ եղեք, որովհետև Ես սուրբ եմ»* (Ա Պետ. 1:15-16):

Երբեմն բավարարվում ենք մեր քրիստոնեական կյանքով և կիրակի օրերին եկեղեցի հաճախելով: Բայց Եբր. 12:14-ն ասում է. *«Սրբության (եռուից եղեք), առանց որի ո՛չ ոք չի տեսնելու Տիրոջը»:*

Դավիթը հարցնում է ու պատասխանում. *«Երիտասարդն ինչո՞վ մաքրի իր ճամփան. Զո խոսքի համեմատ դրան զգուշությամբ մոտենալով»* (Սաղ. 119:9):

Դավթի պես քաջություն ունե՞նք Տիրոջ մոտ գնալու և Նրան խընդրելու՝ ասելով. *«Տե՛ս, թե արդյոք որևէ կորստյան տանող շարժառիթ կա՞ իմ մեջ, և ինձ հավիտենական ճանապարհով առաջնորդի՞ր»* (Սաղ. 139:23-24):

Թող Տերը մեզ խոնարհություն և իմաստություն շնորհի, քանի որ վերջին օրերում ենք ապրում:

«Եվ դուք սուրբ պետք է լինեք Ինձ համար, որովհետև Ես՝ Տերս, սուրբ եմ և ազգերի մեջ ձե՛զ առանձնացրի, որ Իմը լինեք» (Ղևտ. 20:26):

Հ. Գ.



Պողոսի աղոթքը Կողոսացիներին ուղղված նամակում

«Այս պատճառով մենք էլ, այն օրվանից, երբ լսեցինք այդ, չենք դադարում ձեզ համար աղոթելուց և խնդրելուց, որ լցվեք Նրա կամքի գիտությամբ՝ ամենայն իմաստությամբ և հոգևոր հասկացողությամբ: Որ դուք Տիրոջ առջև արժանի կերպով քայլեք, ամեն ինչում Նրան հանելի ձևով, բոլոր բարի գործերի մեջ պտղաբեր լինելով և անելով Աստծո գիտությամբ. Իր փառքի գործության համեմատ ամենայն գործությամբ գորսացած, ձեզ տալով կատարյալ համբերություն և երկայնամտություն՝ ուրախությամբ, գոհանալով Հորից, որ մեզ արժանացրեց մասնակից լինելու լույսի մեջ բնակվող սրբերի վիճակին» (Կող. 1:9-12):

Թեև Պողոսը Կողոսիա չէր այցելել, նա Եպափրասից, հավանաբար նաև ուրիշներից լսել էր այնտեղի հավատացյալների հավատքի ու բուրբ սրբերի հանդեպ ունեցած նրանց սիրո մասին: Ինչպիսի՛ քաջալերանք էր սա՝ հանուն հավատքի բանտարկված առաքյալի համար: Իսկապես, չէ՞ որ մենք նույնպես մեծապես կքաջալերվենք՝ լսելով Տիրոջ ժողովրդի հիանալի համբավի մասին:

Բայց Պողոսը գիտեր, որ շատ ավելին կա փորձառելու, և դա դրդում էր նրանց համար շարունակաբար աղոթելու: Նրա աղոթքը, որը գրված է Կող. 1:9-12-ում, ցույց է տալիս նրա սրտի փափագը նրանց հանդեպ:

Պողոսի առաջին խնդրանքը սա էր. «Լցվեք Նրա կամքի գիտությամբ՝ ամենայն իմաստությամբ և հոգևոր հասկացողությամբ»: Այսպես էր նաև Դավիթը խրատում իր որդուն՝ Մողոմոնին, ինչպես կարդում ենք Առակ. 4:7-ում. «Գլխավորն իմաստությունն է, ուստի իմաստություն տա-

ցիր»։ Գիտելիքը կարևոր է, բայց իմաստությունն ավելի կարևոր է։ Մենք չենք կարող անտեղյակ լինել Աստծո Խոսքից, բայց մեզ անհրաժեշտ է հոգևոր իմաստություն և հասկացողություն՝ զանազանելու Նրա կամքը։ Այդպես է սկսվում Կողոսիայի սրբերի համար արված Պողոսի աղոթքը, և դրա վրա նա հիմնում է իր հաջորդ խնդրանքը։

«Որ դուք Տիրոջ առջև արժանի կերպով քայլեք, ամեն ինչում Նրան հաճելի ձևով, բոլոր բարի գործերի մեջ պտղաբեր լինելով և անելով Աստծո գիտությանը»։ Ինչ փառահեղ աղոթք։ Արդյո՞ք ձեր սիրտն արձագանքում է՝ ասելով. «Այո՛, այո՛, դա իմ անկեղծ փափագն է»։ Այս աղոթքն Աստծո շնորհքով կարող է պատասխանվել ձեր և իմ կյանքում։ Մենք կարող ենք սովորել քայլել Տիրոջն արժանի կերպով և լիովին հաճելի լինել Նրա համար։ Մտածե՛ք դրա մասին։ Ինչպիսի՛ արտոնություն։ Ինչ ուրախություն։ Այո՛, վճարելու գին կա։ Այո՛, դժվար ժամանակներ կլինեն։ Բայց դրանք ոչինչ են այն փառքի համեմատ, որը կհայտնվի, երբ Տեր Հիսուսը գա։

1-ին Սաղմոսում տեսնում ենք պտղաբերության գեղեցիկ պատկեր։ Տեր Հիսուսը սովորեցրեց, որ մեր պտղաբերությունը փառավորում է Հորը, և դրանով իսկ դառնում ենք Նրա աշակերտները (Հովհ. 15:8)։ Մեր ունեցած կյանքի փորձառությունները օգնում են մեզ, որպեսզի *«անենք Աստծո գիտության մեջ»*։ դա կխորացնի մեր հավատքը և կխթանի մեր հարատևությունը։

Պողոսը լավ գիտեր, որ սա նեղ ու դժվարին ճանապարհ է, ուստի աղոթում էր, որ հավատացյալները զորանան Աստծո զորությամբ, որը թույլ է տալիս ամենաթույլ սրբին համբերել ու հարատևել ուրախությամբ և մեծ երախտագիտությամբ։

Քսան դարը չի փոխել Աստծո ճանապարհները, ոչ էլ Նրա սիրտն Իր ժողովրդի նկատմամբ։ Եկե՛ք հետևենք Պողոսի օրինակին և համարձակորեն այսպես աղոթենք միմյանց համար։ Այն ներշնչված էր Սուրբ Հոգուց, ով փափագում է մեծ բաներ իրականացնել Աստծո ծառաների կյանքում՝ ի փառս Քրիստոսի, որը մեր կյանքն է։

Նեյլ Բուքման

Հովնանի պատգամը (1)

Աստված կարեկից է

Հովնանի մարգարեությունը կարդալիս մեր ուշադրությունը գրավում է երկու կարևոր ճշմարտություն: Առաջինը վերաբերում է Աստծո ճշմարտությանն ու Նրա ուղիներին, իսկ երկրորդը՝ մարդու՝ հատկապես Աստծո ծառայի էությանը:

Աստծո մասին ճշմարտությունը

Հովնանի գիրքը բացահայտում է Աստծո էության և Նրա ուղիների շատ հայեցակարգեր: Մարգարեության նշանավոր թեմաներից են Աստծո գերիշխանությունը, ողորմությունը և ներողամտությունը: Նրա գերիշխանությունը երևում է բնության և Իր ծառաների վրա: Երբ Իր ծառաներն անհնազանդ են, Նա իրավունք ունի քայլեր ձեռնարկելու Իր կամքի իրականացումն ապահովելու համար:

Աստված, ով վերահսկում է տիեզերքը, ուղղորդում է Իր ծառաներին, որպեսզի նրանք լինեն այնտեղ, որտեղ Նա ուզում է, և ակնկալում է, որ նրանք ամբողջ սրտով հնազանդվեն, նույնիսկ եթե դա նշանակում է անել այն, ինչը ցանկալի չէ նրանց համար, օրինակ՝ Իր պատգամը թշնամի ազգին հասցնելը: Այն, ինչ Աստված փափագում է, որ կատարվի, կկատարվի: Նմանապես, երբ Տերը Երուսաղեմ մտավ, և փարիսեցիները դժգոհեցին մարդկանց բարձրացրած աղաղակից, Տիրոջ պատասխանը շատ հստակ էր. «Ասում եմ ձեզ, եթե սրանք լռեն, քարերն անմիջապես պիտի աղաղակեն» (Գուկ. 19:40): Այդ օրը պետք է Մեսիան հռչակվեր, և ոչինչ չէր խանգարի կամ չէր կարող խանգարել Աստծո կամքի կատարմանը:

Աստված է պատժում անհնազանդությունն ու ապստամբությունը: Հովնանը չհնազանդվեց Նիմվե գնալու Աստծո հրահանգին. փոխարենը փորձեց Թարսիս փախչել: Նա պետք է սովորեր, որ անհնազանդը անպատիժ չի մնա:

Աստծո օգտագործած պատժի մեթոդները նախատեսված են Իր ճանապարհները մեզ սովորեցնելու համար: Երբեմն մեթոդները խիստ են, ինչպես կարդում ենք այս պատմության մեջ. Հովնանին ծովը նե-

տեցին և մի մեծ ձուկ կույ տվեց նրան: Երբեմն դրանք խիստ չեն, բայց Աստծո մեթոդները Իր ճանապարհները սովորեցնելու նպատակ են հետապնդում: Աստված Հովնանի համար դդմենի անեցրեց, որպեսզի դրա սովերի տակ նստելով՝ հանգստանա: Այնուհետև Աստված հեռացրեց այն, որպեսզի Հովնանին սովորեցնի Իր ողորմածության մասին: Հովնանը գայրացավ, երբ տեսավ, որ դդմենին չորացել է, չնայած որ ինքը կապ չուներ դրա ստեղծման կամ անի հետ: Աստված ուզում էր Հովնանին ցույց տալ, որ Ինքն իրավունք ունի մտահոգվելու Նինվեի ժողովրդի մասին, ում ստեղծել էր: Սա ներառում է ողորմած լինելու Նրա իրավունքը նրանց հանդեպ, ովքեր ապաշխարում են:

Աստծո ներողամտության պատգամը կանգ չի առնում ազգային սահմանների վրա: Սա հակառակ է Հովնանի՝ թշնամու հանդեպ սեր ունենալուն: Աստված ողորմած է և ներում է նրանց, ովքեր ապաշխարում են: Նա ողորմած է, դանդաղ է բարկանալու մեջ և առատ է ողորմությամբ: Հովնանը գիտեր այս ճշմարտությունը, և դա նրան դուր չէր գալիս: Բայց մենք կարող ենք երախտապարտ լինել, որ Աստված ներում է բոլոր նրանց, ովքեր ապաշխարությամբ Իրեն են դիմում: Պատգամը, որը Տերը Մովսեսին հայտարարեց Ելից 34:6-7-ում, մնում է ճշմարիտ.

«Եվ Տերը նրա առջևից անցավ և հայտարարեց. «Տերը, Տեր Աստվածը, ողորմած և գթացող, երկայնամիտ և բարեգթությամբ ու ճշմարտությամբ առատ, Իր ողորմածությունն է ցուցաբերում մինչև հազարավորների հանդեպ, ներում է անօրենությունը, հանցանքն ու մեղքը, սակայն մեղավորին երբեք անպարտ չի թողնում, հայրերի անօրենությունն այցելում է որդիների վրա և որդոց որդիների վրա՝ մինչև երրորդ ու չորրորդ սերունդը»:

Նինվեի ժողովրդին տրված ներումը Երեմիային ասված ճշմարտության լավ օրինակ է (18:7-10).

«Ամեն անգամ, երբ վճռեմ մի ազգի կամ թագավորության դեմ՝ այն քանդելու, փուլ տալու ու վերացնելու համար, եթե այդ ազգը, որի մասին խոսեցի, դարձի գա իր չարություններից, այն ժամանակ Ես էլ կզղջամ այն չարիքի համար, որ մտածեցի անել նրանց նկատմամբ: Իսկ երբ խոսում եմ մի ազգի կամ թագավորության մասին՝ այն կառուցելու ու տնկելու համար, բայց նրանք չարություն անեն Իմ աչքի առաջ՝ Իմ խոսքին ականջ չդնելով, Ես էլ կզղջամ այն բարիքի համար, որ ասացի, թե կանեն նրանց»:

Աստված նաև գերիշխան է և բացարձակ վերահսկողություն ունի բնության վրա: Նրա գերիշխանությունը երևում է այն ամենի մեջ, ինչ Նա պատրաստել էր Հովնանի համար: Նշվում է հինգ բան. առաջինը փոթորիկն էր (1:4), որ Աստված ուղարկեց՝ անհնազանդ մարգարեին կանգնեցնելու համար: Աստված մտադրված էր ուղղորդել Հովնանին, որ ի վերջո անի այն, ինչ նրան ասվել է: Երկրորդը մեծ ձուկն էր (1:17), որը նախատեսված էր մարգարեի կյանքը փրկելու համար, որպեսզի հետագայում նա կատարի Աստծո կամքը: Հաջորդը Աստծո կողմից տրված դոմենին էր (4:6), որը նախատեսված էր մարգարեի կյանքն ավելի տանելի դարձնելու համար: Գրեթե անմիջապես հետո Աստված որդ պատրաստեց (4:7)՝ դոմենին չորացնելու համար, որպեսզի Հովնանը հայտնվի այնպիսի իրավիճակում, որտեղ խորը կմտածի Աստծո ողորմած բնավորության մասին: Վերջապես ուղարկվեց արևելյան քամին (4:7)՝ որպես վերջին քայլ, որով Հովնանին ցույց տրվեց, որ Աստված ողորմած է:

Գասեր մեզ համար

- Աստված վերահսկում է բնությունը: Բնության բոլոր տարրերը՝ փոթորիկը, ձուկը, դոմենին, որդը, քամին, Նրա տրամադրության տակ են, և Նա կարող է և օգտագործում է դրանք Իր փառքի համար:
- Աստված հնազանդություն է ակնկալում Իր ծառաներից: Եթե չենք հնազանդվում Նրան, չենք կարող ակնկալել, որ Նա անտեսի մեր մեղքը:
- Եթե Աստված փափագում է պատգամ հղել մի ազգի կամ խմբի, ապա Նա կարող է ստիպել անհնազանդներին հնազանդվել կամ կարող է օգտագործել մեկ այլ մեթոդ: Մուրթքեն դա գիտեր, երբ Եսթերին ասաց. *«Եվ եթե դու այս պահին լռես, մի ուրիշ տեղից հրեաների համար ազատություն ու փրկություն կլինի, բայց դու և քո հոր տունը կկորչեք. և ո՞վ գիտե, զուցե հենց մի այսպիսի ժամանակի համար ես հասել թագուհու աստիճանին»* (Եսթեր 4:14):
- Աստված չի փափագում ամբարիշտների մահը: Նրա կամքն է, որ մարդիկ ապաշխարեն ու ծառայեն Իրեն: Նա կարեկից է, և մենք կարող ենք շնորհակալություն հայտնել Նրան Իր շնորհքի համար:

- Աստված և՛ գերիշխան է, և՛ ողորմած: Նա ողորմած է, դանդաղ՝ քարկանալու մեջ, և առատ ողորմությամբ: Նրանք, ովքեր ապաշխարում են, ներվում են:

Դոն Սթոքմեր

Ապաշխարություն. շրջվել՝ ճշմարիտ Աստծուն հետևելու համար (1)

2 013 թ.-ին ընկերոջս հետ քայլեցինք Կապույտ լեռներում գտնվող Գլենբրուկ կիրճով մինչև Լապաթոուն երկաթուղային կայարան: Ես ունեի քարտեզ, որին պետք է հետևեի: Չորից դուրս գալով՝ հայտնըվեցինք մի հանգույցի մոտ, բայց չգիտեի, թե որտեղ ենք գտնվում քարտեզի վրա: Չգիտեի՝ կայանը ճա՞խ կողմում է, թե՞ աջ: Մոտավորապես 15 րոպե քայլեցինք դեպի հյուսիս, իսկ հետո զոջացինք (շրջվեցինք), որովհետև հասկացանք, որ կայանը հավանաբար հարավում է գտնվում: Մենք պետք է շրջվեինք 180 աստիճանով, որպեսզի հասնեինք մեր նպատակակետին: Քանի որ այս սխալի պատճառով վատնեցինք առնվազն կես ժամ, ես որոշեցի ձեռք բերել բջջային հեռախոս, որպեսզի կարողանամ օգտագործել GPS-ը, ինչպիսին Google maps-ն է՝ տեսնելու, թե որտեղ եմ գտնվում քարտեզի վրա:

Վերջերս կինս նման փորձ ունեցավ: Նա Սիդնեյում մետրոյով մեկնեց հյուսիս-արևմուտք՝ ինձ հանդիպելու, այնուհետև թեքվեց դեպի հարավ-արևմուտք: Որոշ ժամանակ անց նա զոջաց (շրջվեց), որովհետև հասկացավ, որ ես հյուսիս-արևելքում եմ: Եվ այսպես՝ դուրս դեռ կարող եք սխալներ թույլ տալ, եթե չեք օգտագործում ձեր GPS-ը:

Բոլորս էլ սխալներ ենք թույլ տալիս, ունենում ենք ճախողություններ ու թուլություններ և ժամանակ առ ժամանակ գնում ենք սխալ ուղղությամբ: Բոլորս երբեմն դեմ ենք գնում Աստծո կամքին: Բոլորս կարող ենք վարվել այնպես, կարծես ավելի կարևոր ենք, քան Աստված: Աստվածաշունչը մեղք է կոչում այն ամենը, ինչ մտածում, խոսում կամ անում ենք հակառակ Աստծո կամքին: Աստվածաշունչը սովոր-

րեցնում է մեզ, թե ինչպես վարվենք այս իրավիճակներում, որպեսզի Աստծո հավիտենական ներումը ստանանք ու վերականգնվենք, երբ ձախողվում ենք: Դա ենթադրում է հեռանալ մեր ձախողություններից և շրջվել դեպի Աստված: Դա նման է շրջադարձ կատարելուն: Ապաշխարությունն այն է, երբ մենք հեռանում ենք մեր ձախողություններից և դառնում դեպի ճշմարիտ Աստվածը:

Սահմանում

Աստվածաշնչում ապաշխարությունը նախկին վարքագծից, վերաբերմունքից կամ կարծիքից թեքվելն է: Դա մտափոխություն է: Նոր Կտակարանում այն հիմնականում առնչվում է անաստված պահվածքից, վերաբերմունքից կամ կարծիքից (մեղքից) դարձի գալուն, և այս մտքի փոփոխությունը ներառում է ձախողությունից (մեղքից) շրջադարձ դեպի Աստված:

Եթե դուք փոխել եք ձեր կարծիքն Ավստրալիայի Woolworths սուպերմարկետից գնված ապրանքի մասին, նրանք կարող են փոխանակել այն, բայց գումարի վերադարձ չեն տրամադրի: Իսկ Samsung-ը առաքումից հետո 14 օրվա ընթացքում կտրամադրի առցանց գնված բջջային ապրանքի փոխանակում կամ փոխհատուցում, եթե ապրանքը օգտագործված չէ և վերավաճառվող վիճակում է գտնվում: Այսպիսով, ինչ-որ բանի մասին կարծիք փոխելը կարող է լավ լինել:

Ապաշխարության օրինակներ Հին Կտակարանից

Արարչագործությունից հետո Ադամը ու Եվան ապստամբեցին ու չհնազանդվեցին Աստծուն (մեղանչեցին): Սրա պատճառով մարդկությունը ժառանգեց ապստամբ բնությունը: Նրանք դարձան եսակենտրոն: Նրանք տիեզերքը ստեղծող Աստծուն հարգելու կամ հնազանդվելու կարիք ընդհանրապես չեն տեսնում:

Տասը սերունդ անց մարդկությունն ընդհանրապես չար էր, չար ու կոռումպացված (Ծննդ. 6:5-2): Մինչ Նոյը կառուցում էր տապանը, նա նախազգուշացրեց աշխարհին Աստծո արդար դատաստանի մասին: *«Հավատով Նոյը, Աստծուց զգուշացվելով դեռ չերևացող բաների մասին, երկյուղածությամբ պատրաստեց տապանը՝ իր տան փրկության համար. որով դատասպարտեց աշխարհին և դարձավ ժառանգորդն այն արդարության, որ հավատով է»* (Եբր. 11:7): Աստված քարոզեց Նոյի միջոցով, երբ

նա կառուցում էր տապանը (Ա Պետ. 3:19-20): Նոյի օրերի ամբարիշտ մարդիկ հնարավորություն ունեցան Աստծո կողմ շրջվելու (ապաշխարելու) և Նրան հետևելու: Ցավոք, նրանք ապստամբեցին ճշմարտության դեմ, հրաժարվեցին տապան մտնելուց և խեղդվեցին ջրհեղեղի մեջ: Մա ցույց է տալիս, որ ապաշխարության բացակայությունը հանգեցնում է Աստծո դատաստանին:

Մ.թ.ա. 1000 թ.-ին Իսրայելի թագավոր Դավիթը հնարավորություն ունեցավ շրջվելու և Աստծուն հետևելու (ապաշխարելու): Նաթան մարգարեն հանդիմանեց Դավթին Բերսաբեի հետ շնության և նրա ամուսնու՝ Ուրիայի սպանության համար (Բ Թագ. 12:1-19):

Այն ժամանակ Դավիթն ասաց Նաթանին. «Տիրոջ դեմ մեղք գործեցի». նա ամաչեց և խոստովանեց իր մեղքը: Մեղքն Աստծո դեմ էր և ոչ թե այլ մարդկանց: Նաթանը պատասխանեց. «Տերը ներեց քո մեղքը»: Աստված ներեց նրա մեղքերը (Բ Թագ. 12:13): Դավթի աղոթքն Աստծո ներման և մաքրման համար տրված է 51-րդ Սաղմոսում: Օրինակը հետևյալն է՝ համոզմունք, խոստովանություն, ապաշխարություն և ապա ներում:

Մ.թ.ա. 710 թ.-ին Եսային ասաց, որ ապաշխարությունը հանգեցնում է ներման: Նա Հուդայի ազգին ասաց. «Տիրոջը փնտրեցեք, քանի զտնվում է. Նրան կանչեցեք, քանի դեռ մոտ է: Ամբարիշտը թող թողնի իր ճանապարհը, և անօրեն մարդը՝ իր խորհուրդները, և Տիրոջը թող դառնա, մեր Աստծուն, քանի որ Նա առատորեն կների» (Եսայի 55:6-7):

Երբ ամբարիշտները դեպի Տերը դառնան (ապաշխարեն), Նա «առատորեն կների» նրանց: Այն կրկնվում է եբրայական պոեզիայի գուգահեռականության մեջ:

Մոտավորապես մ.թ.ա. 640թ.-ին Հին Կտակարանի Օրենքի գիրքը հայտնաբերվեց եբրայական տաճարում (Դ Թագ. 22:1-20): Երբ Հովսիա թագավորը լսեց, «նա պատռեց իր պատմունանը» և լաց եղավ, քանի որ հասկացավ, որ ազգը չի հնազանդվել Աստծո օրենքին: Փոխարենը նրանք հետևել էին կուռքերին: Իսկ նրանց պատիժը կանխատեսված էր օրենքով: Այնուհետև նա նորոգեց նրանց ուխտը, որ հետևեն Տիրոջը և պահեն Նրա պատվիրանները (Դ Թագ. 23:1-24): Եվ բոլոր կուռքերը, կուռքերի գոհասեղանները և ազգի հեթանոս քա-

հանաները ոչնչացվեցին: Այստեղ տեսնում ենք, որ ապաշխարությունը ակնհայտ էր Հովսիա թագավորի գործողություններում: Նա Աստծո դատաստանին դիմակայելուց շրջվեց դեպի Աստծո ներումը:

Հին Կտակարանի մարգարեներից շատերը ապաշխարության կոչ արեցին Իսրայել ազգին: Օրինակ՝ մոտավորապես մ.թ.ա. 520 թ.-ին Չաքարիան Հուդային ասաց. «Ուստի նրանց ասա. այսպես է ասում Չորասց Տերը. «Ի՛նձ դարձեք,- ասում է Չորասց Տերը,- և Ես էլ ձեզ կդառնամ», - ասում է Չորասց Տերը: Մի՛ եղեք ձեր հայրերի նման, որոնց առաջին մարգարեներն աղաղակում էին՝ ասելով, թե այսպես է ասում Չորասց Տերը: Դարձե՛ք ձեր չար նամիհաններից ու ձեր չար արարքներից», բայց նրանք չստեցին և Ինձ ականջ չդրեցին,- ասում է Տերը» (Չաք. 1:3-4):

Նրանց ապաշխարելուց հետո Չաքարիան մարգարեացավ Իսրայելի վերականգնման մասին (Չաք. 1:6, 16-17): Այսպիսով, Հին Կտակարանում ճշմարիտ Աստծուն հետևելու համար շրջվելու օրինակը (ապաշխարությունը) հետևյալն է՝ ներում (Աստծուց) և ապա վերականգնում (Աստծո կողմից):

Ձորջ Հաուր
Շարունակելի...

«Եդրայրներ, եթե մեկը հանկարծ մի հանցանքից հաղթահարվի, դուք, որ հոգևոր եք, նմանին վերականգնեք հեզության հոգով, ինքնեղբ գգույշ լինելով, որ դուք էլ փորձության չենթարկվեք: Միմյանց բեռը կրեցե՛ք և այսպիսով կատարեցեք Քրիստոսի օրենքը: Որովհետև, եթե մեկը համարում է, թե ինքը մի բան է, երբ չէ, նա ինքն իրեն է խաբում: Թող ամեն մեկն իր գործը կշռի, այն ժամանակ իրենով կբավարարվի և ուրիշի հետ չի համեմատվի, որովհետև, ամեն մեկն իր բեռն է կրելու: Ետսքին աշակերտողը թող իր ուսուցչին բոլոր բարի բաներում մասնակից դարձնի:

Մի՛ խաբվեք, Աստված չի ծաղրվի, որովհետև, մարդ ինչ որ ցանում է, այն էլ պիտի հնձի: Իր մարմնի համար ցանողն իր մարմնից ապականություն կհնձի, իսկ Հոգու համար ցանողը՝ Հոգուց հավիտենական կյանք կհնձի»:

Գաղ. 6:1-8

Թե ինչպես ևս խաղաղություն գտավ

Նա քսան տարեկան էր. թեև ոտքը ութ տարեկանում անդամահատել էին, այնուամենայնիվ, որոշել էր չընկրկել և կյանքում հաջողությունների հասնել: Գեղեցիկ օրհորդ էր, առողջ, սեփական բիզնես էր սկսել, բայց հոգում դատարկության զգացում ուներ: Ինչ-որ կարեվոր բան պակասում էր, և ոչ մի բան նրան իր որոնած ուրախությունն ու հոգու բերկրանքը չէր պարգևում: Նրան համակրում էին, ամուսնության առաջարկ անում, բայց դա էլ նրան չէր ուրախացնում:

Մի օր իր հոր աղյուսների գործարանի հաշվապահը՝ աղքատ մի երիտասարդ, նրան մի գիրք տվեց. Աստվածաշունչ էր: Մի օր էլ, երբ նա տխուր էր և դատարկության զգացումով տոգորված, վերցրեց այդ գիրքն ու գնաց ծովափ, որն իրենց տնից մեկ մղոն էլ հեռու չէր: Նա սկսեց կարդալ, ու թեև աստվածավախ էր և հավատարիմ՝ իր կրոնական համոզմունքներին, կարդացածի մեծ մասը չէր հասկանում: Մակայն նրա ուշադրությունը գրավել էր աստվածաշնչյան համարներից մեկը (Հովի. 3:16), որը նա մի քանի անգամ կարդաց մտքում, հետո՝ բարձրաձայն.

«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացող չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:

Արցունքները հոսեցին, սահեցին նրա այտերի վրայով: Նա ընկավ գետնին, ձայնի ամբողջ ուժգնությամբ բացականչեց. «Ո՛վ Աստված, Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ ինձ այդքան շատ ես սիրում, որ Որդուդ ուղարկեցիր ինձ փրկելու: Աստված իմ, ների՛ր ինձ՝ մեղավորիս, ես խոստանում եմ կյանքիս մնացած տարիներին քեզ ծառայել»:

Նա ոտքի ելավ ու ասաց. «Աստված իմ, այս աշխարհում ամենից ու ամեն ինչից առավել ես քեզ եմ սիրում: Տեր Հիսուս, խնդրում եմ՝ վերցրո՛ւ իմ կյանքն ու իմ Տե՛րը եղիր»:

Օրհորդը տուն վերադարձավ բոլորովին նոր մարդ դարձած: Հանեց իր ոսկեղենը, նայեց շուրջբոլորը, հավաքեց ու ազատվեց այն ամենից, ինչն աշխարհիկ կամ անարժեք էր համարում: Հետո վազեց մոր մոտ

ու ասաց, որ գտել է այն, ինչ փնտրում էր՝ խաղաղություն, ուրախություն և կյանք: Նա չէր կարողանում չարտահայտվել և այդ հրաշալի լուրի մասին պատմում էր իրեն հանդիպող բոլոր ծանոթներին: Ի վերջո՝ օրիորդն այդ մասին պատմեց նաև այն երիտասարդ հաշվապահին, որը ցանկանում էր իր հետ ամուսնանալ և Աստվածաշունչ էր նվիրել իրեն: Նա պատմեց, որ ինքը նոր մարդ է դարձել և այսուհետ ապրելու է Հիսուսի՝ իր Տիրոջ ու Փրկչի համար: Նա ամուսնացավ այդ երիտասարդ հաշվապահի հետ, որը վերստին ծնված հավատացյալ էր և Ավետարանը տարածելու սրտացավություն ուներ: Նրանք հրաշալի գույգ կազմեցին, ունեցան երկու զավակ, չորս թոռնիկ և երեք ծոռ:

Ամուսինը, որ ամբողջ կյանքում հավատարմորեն ծառայել էր, մահացավ 1995թ.:

Նրա կնոջ վկայությունը միշտ այսպես է սկսվում. «Ես փրկություն ստացա ոչ թե եկեղեցում, քարոզների կամ արթնության ժողովների ընթացքում, այլ միայնակ՝ ծովափին: Ինձ որևէ մեկը ցույց չտվեց դեպի Հիսուս տանող ճանապարհը. ես Աստծուն էի փնտրում, և Նա այնտեղ էր: Նա վերցրեց իմ դատարկ կյանքը և փոխարենն ինձ տվեց նոր, հրաշալի, խանդավառությամբ լի կյանք: Նույնը կարող է նաև քեզ համար անել»:

Այդ կինը՝ Օվսաննան, ամբողջ օրը աղոթքի ծառայություն էր անում, երկու հեռախոսագիծ ուներ, մարդիկ անընդհատ գանգում էին և նրան խնդրում, որ իրենց համար աղոթք անի: Տարիների ընթացքում Տիրոջ հանդեպ ունեցած նրա խանդավառությունն ամենևին էլ չէր պակասել: Հավանաբար կռահեցիք, որ այդ կինն իմ մայրն էր, իմ ուսուցիչը, իմ ընկերն ու աղոթքի այն զինվորը, որ ամեն օր աղոթում էր և՛ իմ ծառայության, և՛ ինձ համար:

Ի՞նչ եք կարծում, մի՞թե հավատացյալի կյանքը հետաքրքիր չէ, մի՞թե Աստված չի պատասխանում աղոթքներին: Եթե մորս՝ Օվսաննայի հետ խոսեիք, կտեսնեիք, որ Տիրոջ հանդեպ նրա խանդավառությունը ժամ առ ժամ աճում է:

Արդյո՞ք դու վայելում ես քո փրկության ուրախությունը. հուսով եմ՝ այդպես է:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Կենտրոնական Լիբանանի վրա

Ռաֆֆի Չափարյան եղբոր և ինձ համար այնքան ուրախալի փորձառություն էր անցյալ տարի այցելել Տյուրոսի և Սիդոնի հնագույն նավահանգիստները: Սրանք քաղաքներ են, որոնք գտնվում են Լիբանանում՝ Միջերկրական ծովի ափին: Սիդոնը՝ երկուսից ավագը, ենթադրվում է, որ գոյություն է ունեցել մինչև մ.թ.ա. 2000 թ.-ը:

Երկուսն էլ հիշատակված են Հին և Նոր Կտակարաններում: Տեր Հիսուսը վկայակոչում է դրանք Իսրայելում տեսած կարծրացած սրբուների դատաստանի առնչությամբ: Այնուամենայնիվ, մյուսները փափագում էին լսել մեր Տիրոջը:

«Իսկ Հիսուսը ծովեզերք քաշվեց Իր աշակերտների հետ, և մեծ բազմություն էր գնում Նրա հետևից՝ Գալիլիայից և Հրեաստանից, Երուսաղեմից և Եդովմից և Հորդանանի մյուս կողմից, ինչպես նաև նրանք, որ Տյուրոսի ու Սիդոնի շրջակայքից էին: Մի մեծ բազմությամբ, երբ լսում էին, թե ինչ մեծ բաներ է արել, Նրա մոտ էին գալիս» (Մարկ. 3:7-8):

Այն, որ հեթանոս քաղաքներն ավելի բաց էին Տիրոջ ձայնի հանդեպ, երևում է փյունիկեցի կնոջ վկայությունից, ով եկավ մեր Տիրոջ մոտ՝ աղաչելով իր դստեր բժշկության համար. *«Եվ երբ իր տունը գնաց, տեսավ, որ դուր դուրս է եկել, և աղջիկը պառկած է մահճի վրա»* (Մարկ. 7:30):

Մենք ACM-ում օրինված ենք՝ տեսնելով, որ աշխատանքը մեծանում է Լիբանանում: Այն չորս տարիների ընթացքում, ինչ սկսել ենք ծառայությունն այնտեղ, մեր աշխատակիցները՝ Թայինն ու Մարալը, մի քանի կամավորների հետ կարողացել են կազմակերպել մոտ 36 ընտանիքի աջակցություն: Բացի մեր խնամքի տակ գտնվող ընտանիքներից՝ կարողացել ենք սննդի փաթեթներ տրամադրել ուրիշներին, հատկապես ճմռանը:

Մոտ տասը ընտանիք հաճախում է տեղի Եղբայրության եկեղեցի: Մեր քույրերը կարողացել են նրանց ապահովել տրանսպորտով: Խոսքի քարոզչությունն ու ուսուցումը շարունակվում է:

Նաև շատ մտահոգված ենք այնտեղի իրավիճակով, հատկապես Իսրայելի սահմանում: Մեր աշխատակիցները շարունակում են ծառայել, թեև նրանց բնակավայրից և աշխատավայրից ոչ հեռու պայթյուններ են լինում: Վերջին շրջանում տեղեկություններ են ստացվել օդանավակայանում անորոշության մասին: Արևմրտյան երկրները իրենց քաղաքացիներին խնդրել են լքել երկիրը: Ավստրալական ավիաընկերությունները քայլեր են ձեռնարկել որոշ չվերթների ուղղությունները փոխելու առնչությամբ, և Ավստրալիայի կառավարությունը նախագգուշացրել է ճանապարհորդությունները սահմանափակելու մասին:

Ամենահուսադրողը, ինչի մասին կարող ենք վկայել, այն է, որ Ավետարանը շարունակում է հռչակվել: Պարբերաբար այցելում ենք մեր ընտանիքներին և հիվանդներին սահմանափակ օգնություն ենք ցուցաբերում:

Մինչ շարունակում ենք աղոթքել՝ ամբողջ երկիրը Տիրոջ ձեռքը հանձնելով, հիշում ենք Տիրոջ խոսքերը. «*Վա՛յ քեզ Քորագին, վա՛յ քեզ Բեթսայիդա, որովհետև եթե Տյուրոսի և Սիդոնի մեջ եղած լինեին այն հրաշքները, որ ձեր մեջ եղան, վաղուց քուրձով և մոխրով ապաշխարած կլինեին: Բայց ասում եմ ձեզ, որ Տյուրոսի և Սիդոնի համար ավելի տանելի կլինի դատաստանի օրը, քան՝ ձեզ*» (Մատթ. 11:21-22):

Հիսուսը մեջբերում է այս քաղաքները՝ Տյուրոսն ու Սիդոնը, որպեսզի հիշեցնի մեզ, որ ընտրյալ ցեղից ինքնահավանները հրաժարվեցին Իրենից, մինչդեռ մնացած աշխարհը պատրաստ էր ականջ դնելու Ավետարանի կոչին: Աստծո Խոսքը և Նրա Հոգին իսկապես շարունակում են լինել մեր ուղեցույցը, մինչ ծառայում ենք Տեր Հիսուս Քրիստոսին այս դժվար ժամանակներում:

Դուկտ.՝ Դանիել Ջեյմս